



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ
 ԿՐԹԱԿՆԵՐՈՒԹՅԱՆ
 և ԳՐԻԳՈՐՅԱՆ
 ՄԻՆԻՍՏԵՐՍՏՎԱՆ
 «30» 06 2014 թ

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԲՓ 41

Տրված է՝

<<Մեզո Գոլդ>> ՍՊԸ
 ք. Երևան, Զարոյան 1/1

Գործունեությունը՝

Թուխմանուկի հարստացուցիչ ֆաբրիկայի նոր
 պոչամբարի լրամշակված բնապահպանական
 մասի վերաբերյալ

<< Արագածոտնի մարզ, Մելիքջյուղ համայնք

<<Բնապահպանական գործունեությունը
 տնօրենի ժ/պ՝



ՊՈՍԿ-ի

Սահակյան Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՃԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 41

‘30’ 06 2014թ.

**<<Մեգո Գոլդ>> ՍՊԸ կողմից ներկայացված Թուխմանուկի
հարստացուցիչ ֆաբրիկայի նոր պոչամբարի լրամշակված
բնապահպանական մասի վերաբերյալ**

Պատվիրատու՝	<<Մեգո Գոլդ>> ՍՊԸ
Նախագծող՝	<<Ակունք-Ֆիրմա>> ՍՊԸ
Լիազորված անձ՝	Ա. Թարվերոյան, Վ. Համբարձումյան
Ներկայացված նյութ՝	Բնապահպանական մաս
Տեղադրման վայրը՝	<< Արագածոտնի մարզ, Մելիքզյուղ համայնք

Նոր պոչամբարը նախատեսվում է կառուցել Մելիք գյուղի արևելյան մասում՝ 800մ հեռավորության վրա, իսկ ֆաբրիկայից մոտ 1600մ հեռավորության վրա, համեմատաբար հարթ տարածքում, որի թեքությունը կազմում է 7 տոկոս: Պոչամբարի տակ հատկացվող տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 6-7 հա: Տեղանքի ռելիեֆը թույլ է տալիս կառուցել կիսահարթային տիպի պոչամբար, որը չորս կողմերից շրջապատված կլինի հողային պատնեշով:

Պոչամբարը լցովի տիպի է, ծավալը կազմում է 370հազ.խմ: Պատնեշո և պոչամբարի հատակն ամբողջությամբ մեկուսացվելու են կավի շերտով, ինչը կկանխի պոչամբարից արտադրական ջրերի ներծծումը ստորգետնյա ջրեր:

Պատնեշի կավային էկրանի հաստությունը նախատեսվում է 3.0մ, իսկ հատակինը՝ 1.0մ: Որպես այլ տարբերակ նախատեսվում է կավի շերտը փոխարինել գեոթաղանթով: •

Գեոթաղանթ (գեոմեմբրանա) - բազմաֆունկցիոնալ գլանափայթեթային պոլիմերային թերթեր են 1.0-2.5 մմ հաստությամբ: Գեոթաղանթները հեշտ կիրառելի են. ստանդարտ թաղանթներն ունեն 2մ և 6մ լայնություն, բարձր եռակցելիության հատկություն: Հարմար է տեղափոխման ու պահեստավորման համար:

Ըստ նախագծի պոչամբարի մակերեսը կազմում է 1.53 հա, կամ 170x90մ: Պոչային տնտեսությունը ներառում է հետևյալ կառույցները՝

- հողային պատնեշ՝ մաքսիմալ բարձրությունը 24.3մ, կառուրի լայնությունը 7մ, վերին շեպի թեքությունը $m=3$, ներքին շեպի թեքությունը $m=2.5$, ներքին շեպի 2052 նիշի վրա նախատեսված է բերմա 3մ լայնությամբ: Պատնեշի մարմինը նախատեսված է կառուցել խճաքարա-խճավազային բնահողերից,

Արագածոտնի մարզի Մելիքզյուղ համայնքի

Սեդրակ Ա. Նախաջյան

18.08.14թ.

- պոչամբարի հատակի կավի շերտի հաստությունը 1.0մ է, գեոթաղանթինը 2.0-2.5մմ,
- պոչատար՝ ընդհանուր երկարությունը - 1607մ է, այն իրենից ներկայացնում է ինքնահոս պողպատե փակ խողովակաշար, 150մմ-տրամագծով՝ տեղադրված բետոնե ակոսի մեջ: Պոչատարի վնասման դեպքում խյուսը ակոսի օգնությամբ կուղղվի պոչամբար, որը միաժամանակ կրում է նաև վթարային ավազանի դեր:
- խյուսը պոչամբարում բաշխելու համար պոչամբարի վերին շեպի վրա նախատեսվում են 24 հատ բաշխիչ ասբոցեմենտե 300մմ տրամագծով կիսախողովակներ:
- Շրջանառու համակարգ՝ պատնեշի վերին շեպի վրայից դեպի պոչամբարի պարզվածք նախատեսվում է կառուցել 47.4մ երկարությամբ և 0.9մ լայնությամբ նեղուղի, որի վրա տեղադրվելու է շարժական պոմպակայան՝ պոչամբարի պարզվածքը հարստացուցիչ ֆաբրիկա ետ մղելու համար:

Հանքահարստացման ընթացքում գոյանում են պոչեր, որոնք կազմում են արտադրողականության 88.6%-ը: Պոչերը խյուսի տեսքով տեղափոխվում և պահեստավորվում են պոչամբարում: Պոչամբար ողղվող խյուսում պինդ մասի պարունակությունը կազմում է 25-26 %: Հեղուկի հարաբերությունը պինդ մասին կազմում է 3 :1, ֆռակցիաների խոշորությունը՝ 0,2մմ – 15-18%, 0,2- 0,08մմ -25-27%, 0,08 – 60-55%:

Պոչանքների պինդ մասի բաղադրությունը հետևյալն է՝ SiO₂ – 46,23%; AL₂O₃ – 10,81%; MgO – 5,17%; TiO₂ – 0,82 %; CaO – 6,41%; MnO – 0,15%; Fe₂O₃ – 6,4%; FeO -3,62%, ՇԿ-12.71%: Պոչերը հրդեհապայթյունավտանգ չեն և ոչ լուծելի:

Ազդեցությունը շրջակա միջավայրի վրա պայմանավորված է, ինչպես շինարարության, այնպես էլ շահագործման փուլերում:

Շինարարության ժամանակահատվածում մթնոլորտային օդի վրա ազդեցության հիմնական աղբյուրներն են հանդիսանում՝ հողային աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները, շինարարական տեխնիկայի, ավտոտրանսպորտի աշխատանքի ժամանակ՝ ծխագազերի արտանետումները/փոշի, ձմբային անհիդրիդ, ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդներ և այլն:


Նախագծում ներկայացված են մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի մերձգետնյա աղտոտվածության մակարդակները, ինչպես շինարարության, այնպես էլ շահագործման փուլերում: Հաշվարկների արդյունքում պարզվել է, որ վնասակար նյութերի կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտու համար սահմանված նորմերում (0.00002-0.033UԹԿ միավոր):

Շինարարության ժամանակ նախագծով նախատեսված է հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Փոշու արտանետումների նվազեցման համար կատարվում է տեխնիկական օրգանում:
- Շինարարական հրապարակը ցանկապատվում է անթափանց թնդանթոն:
- Շինարարական տեխնիկայի շարժիչների կարգավորում:

Շինարարական աշխատանքների ժամանակ հանված գրունտների ընդհանուր քանակը կազմում է 3342235տ, որոնք կտեղափոխվեն 20մ հեռավորության վրա և կօգտագործվեն պոչամբարի պատնեշի կառուցման համար:

Հողի բուսական շերտը 46200տ քանակով, կտեղափոխվի հատկապես մարածք, կպահեստավորվի 3մ բարձրությամբ թմբերի տեսքով: Այդ հողերը հետագայում օգտագործվելու են պոչամբարի ռեկուլտիվացման համար:



Շինարարության ժամանակահատվածում ջուրն օգտագործվում է

- շինարարություն իրականացնող աշխատողների կոմունալ-կենցաղային կարիքների համար;
- օգտակար հանույթի խճակոպճային բնահողերից պատվարի մարմնի կառուցման համար;
- բերովի ավազակավային բնահողից էկրանի կառուցման
- բերովի ավազակավային բնահողից պոնուրի կառուցման
- 15սմ հաստությամբ խճային ծածկի ստեղծման գործընթացներում
- փոշու արտանետումների նվազեցման նպատակով շինարարական հրապարակի ջրցանման գործընթացներում:

Օգտագործվող խմելու և տեխնիկական ջուրը բերովի է:

Ըստ նախագծի տեխնիկական ջրի ընդհանուր ծախսը շինարարական աշխատանքների ժամանակ կկազմի 35627մ³:

Շրջակա միջավայրին հասցած ընդհանուր տնտեսական վնասը ըստ նախագծի կազմում է 4426.62 հազ.դրամ:

Շահագործման ժամանակ նախագծով նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

- Գրունտային ջրերի որակը և մակարդակը հսկելու համար նախատեսվում է պոչամբարի պատնեշից 20-25մ հեռավորության վրա տեղադրել փնջով տարբեր խորությունների վրա պիեզոչափեր (ամեն փնջում 3հատ) գրունտային ջրերի դրենաժի ուղղությամբ:
- Տեղադրվելու է նաև ֆոնային պիեզոչափ, պոչամբարի հնարավոր աղդեցությունից դուրս, գրունտային ջրերի դրենաժի հակառակ ուղղությամբ:
- Պատնեշի ռեկուլտիվացիա:
- Պատնեշի կատարի ջրցանում չոր և շոգ եղանակներին:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է պոչամբարի պատնեշի ռեկուլտիվացիա: Պոչամբարի պատնեշի տարածքը կազմում է 22953քմ, ծախսը կազմում է 4472 հազ. դրամ 1 հա վրա:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանում են թափոններ /հանված գրունտները/ 10տ քանակով, որոնք հավաքվում են հատուկ հրապարակում և օգտագործվում են պատնեշի շինարարության ընթացքում:

Նախագծում ներկայացված է հակավթարային միջոցառումներ և մոնիթորինգի ծրագիր:

Փորձաքննական պահանջներ

1. Անհրաժեշտ է << բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացնել Թովմանուկի ուսուցիչ հանրավայրի արդյունահանման և հարստացուցիչ ֆաբրիկայի վերակառուցման նախագծերը:
2. Շահագործման ավարտից հետո անհրաժեշտ է պոչամբարի ռեկուլտիվացիայի նախագիծը ներկայացնել << բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
3. Գործունեության ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի առանձին բաղադրիչների (օդ, ջուր, հող, մոնիթորինգ և կազմել


հաշվետվություն, որը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը:

4. Համաձայն ՀՀ Արագածոտնի մարզպետի 24.03.2014թ. N01/13.2/890-14 գրության, անհրաժեշտ է լուծել <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 5 հոդվածի 1-ին կետի ա) ենթակետի երկրորդ պարբերությամբ սահմանված ազդակիր համայնքի բնակչության բարեկեցության հարցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Մեզո Գոլդ>> ՍՊԸ կողմից ներկայացված Թուխմանուկի հարստացուցիչ ֆաբրիկայի նոր պոչամբարի նախագծի լրամշակված բնապահպանական մասի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերոնշյալ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Փոխտնօրեն՝



Հ. Գրիգորյան

Փորձագետ՝



Լ. Բալայան